ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 մարտի 2024 թվականի թիվ 26-Ա

ք. Երևան

«ՑԱՅԳ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2024 թվականի փետրվարի 29-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 5 վարչական վարույթի նյութերը, ***պարզեց.***

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս տեսալսողական մեդիածառայություն մատուցող «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրել է Հեռարձակողի «Ցայգ» տեսալսողական ծրագրի կողմից Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև Հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 01-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա և «Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 110-Ա որոշումների պահանջների խախտման փաստ:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 2024 թվականի փետրվարի 29-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2024 թվականի փետրվարի 29-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ կազմված արձանագրության՝ Հեռարձակողի «Ցայգ» տեսալսողական ծրագրի 2024 թվականի փետրվարի 26-ի եթերում՝ ժամը 22:37:16-ից մինչև 00:27:02-ը հեռարձակված

«Հայելիներ» ֆիլմը պարունակել է վախի, տագնապի, անելանելության զգացում հարուցող, սոսկում առաջացնող տեսարաններ և ձայնաշար, մարդկանց խոշտանգումների, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական, հոգեկան ցավ պատճառելու, խոշտանգված մարմիններ և արյունահեղ տեսարաններ մասնավորապես ժամը 22:40:47-22:41:15, 23:07:30-23:10:45, 23:11:52-23:12:02 և 23:23:09-23:24:39 ընկած ժամանակահատվածում:

Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 29-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2024 թվականի մարտի 04-ին Հանձնաժողով ներկայացրած իր բացատրագրով հայտնել է հետևյալը.

« (...) հայտնում եմ իմ համաձայնությունը կազմված արձանագրության հետ, մասնավորապես ընդունելով, որ 2024 թվականի փետրվարի 26-ին՝ ժամը 22:37:16-ից 00:27:02-ը հեռարձակած «Հայելիներ» ֆիլմը, պարունակում է վախի, տագնապի, անելանելության զգացում հարուցող, սոսկում առաջացնող տեսարաններ և ձայնաշար, մարդկանց խոշտանգումների, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական, հոգեկան ցավ պատճառելու, խոշտանգված մարմիններ և արյունահեղ տեսարաններ:

Ֆիլմի ցուցադրումը ժամը՝ 22:37:16-ից 00:27:02-ը, ՀԸ ծրագրերի պատասխանատուի անփույթ աշխատանքի արդյունքն է:

Հաշվի առնելով «Յայգ» ՀԸ ֆինանսական դժվարին պայմանները, խնդրում ենք Ձեզ, հնարավորության դեպքում ՀԸ նկատմամբ կիրառել նկատողություն, այլ ոչ թե ֆինանսական տուգանք»:

<u>Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը</u>.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8.Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող

բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը:»:

Օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է.

«Կարգավորող պետական մարմինն ընդունում է սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական, անհատական և ներքին ակտեր:»:

Ղեկավարվելով Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 32-րդ հոդվածի 7-րդ մասերով՝ Հանձնաժողովը 2021 թվականի հուլիսի 01-ին թիվ 109-Ա որոշմամբ սահմանել է անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների չափորոշիչները և թիվ 110-Ա որոշմամբ՝ էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի որոշման չափորոշիչները:

Հանձնաժողովի՝ «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշման Հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը **24.00-6.00-ն ընկած ժամանակահատվածում:**

Հանձնաժողովի՝ «Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 110-Ա որոշման Հավելվածի 3-րդ և 4-րդ կետերը սահմանում են.

«3. Սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող են համարվում այն ֆիլմերը, որոնք ցուցադրում են՝

1) վախի, տագնապի, անելանելիության զգացում հարուցող կամ սոսկում առաջացնող տեսարաններ կամ ձայնաշար,

2) մարդկանց, ինչպես նաև կենդանիների խոշտանգումների, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական կամ հոգեկան ցավ պատճառելու, խոշտանգված մարմինների մանրամասների և արյունահեղ տեսարաններ,

3) ողջունվում է բռնությունը կամ ցանկալի են դարձնում բռնության գործադրումը,

4) ֆիլմի սյուժեն հիմնված է միայն բռնության տեսարանների վրա և ֆիլմը սպառողի մոտ առաջացնում է մղձավանջային, բացասական հույզեր, զզվանք անհատի նկատմամբ:

4. էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը կարող են եթեր հեռարձակվել ժամը **24.00-6.00-ն ընկած ժամանակահատվածում:**

Փաստում ենք, որ Հեռարձակողը 2021 թվականի հունվարի 21-ից (սփռման տարածքը՝ Շիրակի մարզ) հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և Հանձնաժողովի թիվ 109-Ա և 110-Ա որոշումներով ամրագրված սահմանափակումը՝ «Ցայգ» տեսալսողական ծրագրով հեռարձակված «Հայելիներ» ֆիլմը պետք է հեռարձակվեր ժամը 24:00-6:00-ն:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 3-րդ գլխի դրույթներով տեսալսողական մեդիածառայություն մատուցողների տեսալսողական հաղորդումների կազմակերպման համար սահմանվել են ընդհանուր պահանջներ, մասնավորապես՝ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար պարտավորություն է սահմանված էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները եթեր հեռարձակել ժամը 24:00-6:00-ն, սակայն Հեռարձակողի կողմից 2024 թվականի փետրվարի 26-ին «Ցայգ» տեսալսողական ծրագրով հեռարձակված «Հայելիներ» ֆիլմում, որտեղ կան վախի, տագնապի, անելանելության զգացում հարուցող, սոսկում առաջացնող տեսարաններ և ձայնաշար, մարդկանց խոշտանգումների, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական, հոգեկան ցավ պատճառելու, խոշտանգված մարմիններ և արյունահեղ տեսարաններ, չի պահպանվել Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ այդ տեսալսողական հաղորդումն եթեր է հեռարձակվել մասնավորապես 22:40:47-22:41:15, 23:07:30-23:10:45, 23:11:52-23:12:02 և 23:23:09-23:24:39 ընկած ժամանակահատվածում:

Հանձնաժողովը, վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, խիստ կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ որոշակի ժամերին անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների հեռարձակման

արգելքն ըստ էության կապված է հանրային շահի հետ, որը տվյալ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես իր մեջ ներառում է անչափահասների առողջությանը, մտավոր ու ֆիզիկական զարգացման վրա հնարավոր բացասական ազդեցությունից պահպանումը: Սույն վարույթի համատեքստում խնդրո առարկան «Հայելիներ» ֆիլմի՝ Օրենքով արգելված ժամին հեռարձակելն է:

Համաձայն «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անչափահասների իրավունքներին վերաբերող հրապարակումներում տեսալսողական մեդիածառայությունները մատուցողները պետք է գործեն մասնագիտական էթիկական նորմերի, ՀՀ օրենսդրության և միջազգային կոնվենցիաների պահանջներին համապատասխան: Քանի որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օժանդակության իրավունք, ուստի յուրաքանչյուր երեխայի իրավունքները և շահերը ավելի վեր են, քան այս կամ այն հիմնախնդրի լուծման հրատապությունը և տեսալսողական ծրագրում այն օգտագործելու անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր երեխա պետք է պաշտպանված լինի ցանկացած իրավիճակում, նրա շահերը, անվտանգությունը պետք է գերակա լինեն խմբագրական ցանկացած պահանջների հանդեպ:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում ևս անդրադարձ կա հանրային բարոյականության և, մասնավորապես, անչափահասների բարոյական դաստիարակության և այդ հարցերում պետության դերին՝ իրավաչափ համարելով կարգավորող մարմնի միջամտությունը երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ու ապահովմանը:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (ՄԱԿ, 1989թ.) դրույթներն արտացոլված են նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի վերջին պարբերությունը սահմանում է՝ արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու ապահովումը մեր օրերում հանդիսանում են պետահրավական կարևորագույն հիմնահարցերից մեկը: Երեխաները բոլոր ժամանակաշրջաններում և հասարակարգերում մշտապես հանդիսացել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը: Երեխաները ցանկացած պետության և հասարակության ապագան են, և նրանից, թե որքանով են պաշտպանված նրանց իրավունքները, կախված է նաև մեր հասարակության ապագան: Ինչպես և ցանկացած քաղաքակիրթ պետություն, որն իր առաջնահերթ գործառույթներից է համարում հասարակության անչափահաս անդամների պաշտպանությունը, Հայաստանի

Հանրապետությունը ևս հոգատարություն է դրսևորում իր ապագա քաղաքացիների բարոյապես և ֆիզիկապես ճիշտ զարգացման և դաստիարակության հանդեպ:

Առկա են բազմաթիվ հետազոտություններ, որոնք փաստում են, որ սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող այն ֆիլմերը, որոնք ցուցադրում են վախի, տագնապի, անելանելիության զգացում հարուցող կամ սոսկում առաջացնող տեսարաններ կամ ձայնաշար, մարդկանց խոշտանգումների, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական, հոգեկան ցավ պատճառելու, խոշտանգված մարմիններ և արյունահեղ տեսարաններ, ազդում են հասարակության, հատկապես անչափահասների տրամադրության, սպասումների և առհասարակ ապրելակերպի վրա, այնուամենայնիվ տեսալսողական մեդիածառայություն մատուցողները շարունակում են ցուցադրել այդպիսի հաղորդումներ: Ուստի անհրաժեշտ է մշակել և գործարկել մեխանիզմներ՝ ժամանակակից աշխարհի հաճախ անվերահսկելի տեղեկատվական հոսքերի պայմաններում երեխաներին նրանց լիարժեք ու ներդաշնակ զարգացմանը սպառնացող տեղեկատվության տարածումից հնարավորին զերծ պահելու համար:

Հաշվի առնելով վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրագիրն այն մասին, որ խախտումը տեսալսողական ծրագրերի պատասխանատուի անփույթ աշխատանքի արդյունքն է՝ բավարար հիմք չի կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և պատասխանատվությունը չկիրառելու համար, իսկ ինչ վերաբերում է Հեռարձակողի այն խնդրանքին, որ Հանձնաժողովը որպես տույժ Հեռարձակողի նկատմամբ կիրառի նախազգուշացում, այլ ոչ թե տուգանք, ապա ամրագրում ենք, որ Օրենքում՝ քննարկվող իրավախախտման համատեքստում, առկա չէ ավելի մեղմ կամ ավելի կոշտ պատասխանատվություն: Այսինքն՝ նման դեպքերի համար Օրենքը հստակ սահմանում է պատասխանատվության միջոցը:

Այսպիսով, Հեռարձակողը փաստացի ընդունել է իրավախախտման փաստը, որի մասին նշել է իր բացատրագրում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկման արդյունքների հետ, և արդյունքում արձանագրվել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին

կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1)գրավոր նախազգուշացում,

2) տուգանք,

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում,

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է.

«Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների եթեր հեռարձակման պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 11-րդ և 14-րդ կետերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշման Հավելվածի 3-րդ մասով, «Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 110-Ա որոշման 3-րդ, 4-րդ մասերով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՑԱՅԳ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2024 թ. մարտի 22
ք. Երևան